ՐՈԲԵՐՏ ԿՈԽ

Ա. ԲԱՐԵԼԵԱՆԻ

Այն մարդը, որի անունը ներկայումս ամբողջ քաղաքակիրթ աշխարհում մարդկութեան մեծ բարերարներից մէկի անունն է վիշում, երկար և ծանր ջանքերի սակ է անցել ճանապարհը դէպի այն փառքը, որ նա պարտական է բժշկականութեան մէջ արած իւր գիւտերին։ Ծնւած որպէս հանքային վերակացուի՛ի, լեռ. հանքային խորհրդականի որդի, հանովրեան լեռնային Կլաուսթալ քաղաքում 11 դեկտ. 1843 թ., այժմ նա տղամարդու ուժեղ հասակումն է և կարող է արդէն լետ նայել իւր չատ նշանաւոր ծառայութիւնների վերայ։ Իւր բժշկական ուսումը սաացաւ Գ.Ցտանինգենի համալսարանում 1862-ից մինչ 1866 թ.։ Դոքտորութիւնը ստացած, նա մի առժամանակ օգնական բժիշկ էր Համբուրգի ընդհանուր հիւանդանոցում. դորանից լետ նա գործեց որպէս գործնական բժիշկ Հաննովերի մի փոքրիկ քաղաքում, լետոյ Պոզենի պրովինցի Ռակուից քաղաքում. 1872-ից նա նշանակուեց վիճակային ֆիզիկոս, և այդ պաշտօնում նա փոքրիկ քաղաքներում իւր ուսումնասիրութիւնը մեծ լրջութեամբ և եռանդով շարունակեց, այնպէս որ կամաց-կամաց նա ճանապարհ բացող հետևանքների հասաւ։ Հակառակ Պաստեորի, որը սկզբից հէնց քիմիկոս է, Կոխը իւր հետազօտութիւնները բուսաբանութիւնից սկսեց։ Բերլինի «Պոստ» լրագրի մի կենսագրական ուրուագծից երևում է, որ Կոխը երկար ժամանակ աշխատել է Բրեսլաւի բուսաբան պրոֆեսոր Ֆերդինանդ Կոհն'ի լաբորատորիայում, ուր նա հետևեց Կոհնի հայեացքներին՝ բուսական պարազիտների լարաբերութիւնների մասին դէպի վարակիչ հիւանդութիւնները։ Կոխի առաջին հասունացած աշխատութիւնն էր «Բերանի վարակիչ հիւանդութիւնների միկրոօրդանիզմների մասին», որնա 1878 թ-ին Կասսել քաղաքում ժողովւած բնագէտների ժողովի բժշկական սեկցիայում դասախօսեց (այն ժամանակ դեռ բակտերիօլոգիա չը կար և առողջաբանութիւնը դեռ պաշտօնական գիտութիւն չէր)։ Արդէն այս աշխատութեան մէջ լաւ նկատուեց Կոխի գիտնական հետազօտութեան ձևն ու եղանակը։ Նորա մտքերի

ընթացքը և եղրակացութիւնները խիստ տրամաբանական են և վկայում են սրամտութիւն. նորա հետազոտական մեթոդները, որ նա ինքը երկար տարիների ընթացքում ստեղծել էր, այնքան հետևողականութեամբ, ճշտութեամբ և շրջանկատութեամբ մշակուած են, որ նոքա զինուած են ամեն հակաճառութեան դէմ. այդ պատճառով էլ նորա հետազոտութիւնների հետևանքները մինչ այժմ գիտութեան կողմից ընդունուել են ուղղակի որպէս անկասկած փաստեր։

Կոխի հետազոտութիւնների նշանակութիւնը մասնագէտներից իսկոյն հասկացուեց և գնահատուեց։ Ցովսէփ Լիստէր, երևելի անգլիացի խիրուրգը և վէրքերի խնամելու անտիսեպտիքական մեթոդի ստեղծողը, իսկոյն անգլիերէն թարգմանել տուեց Կոխի այն առաջին աշխատութիւնը։

Իւր բակտերիոլոգիական գործունէութեան առաջին տարիներում Կոխի հետազոտութիւնները տարածուեցին սեպտիցեմիայի վերայ (Septicaemie, արիւնի նեխութիւն) և փայծաղի բորբոքման վերայ։ Մանաւանդ վերջինիս նկատմամբ նոքա շատ արդիւնաւոր եղան. նոքա նոր լոյս գցեցին փայծաղի բակտերիաների վերայ։ Դորան լայնորդեց ջերմի նորոգելու (febris recurrens) փոխադրելու գիւտը, որպէս նաև թէ այդ հիւանդութիւնը դրդում է այսպէս կոչուած Օբերմայերեան սպիրիլլուս (Obermeyerscher Spirilius)։

Իւր գիւտերի համար Կոխը պարտական էր մանրադիտական առարկաները, մանաւանդ բակտերիաները ներկելու իւր արուեստական մեթոդին, որով նոքա աչքին տեսանելի և որոշ են դառնում։ Գլխաւորապէս այդ ներկելու մեթոդին պէտք է վերագրել այն զարգացումը, որ ստացաւ բժշկականութեան այդ ամենանոր ճիւղը վերջին տասը տարիներում։ Հէնց բակտերիաները ներկելու այդ մեթոդը տարաւ Կոխին դէպի այն գիւտը, որը բժշկական հետազոտութեան մեծագործութիւն կը համարուի բոլոր ժամանակների համար, այն է՝ գիւտը տուբերկէլ-բացիլի, որպէս դրդիչ տուբերկուլոզի, իւր արտայայտուելու բոլոր ձևերով մարդկային և կենդանական մարմինների մէջ։ 1882 թ. 24 մարտի (նոր տոմար) կայացաւ Բերլինի ֆիզիոլոգիական ընկերութեան նշանաւոր նիստը, ուր Կոխը դասախօսեց «Տուբերկուլոզի էտիոլոգիայի մասին» (Ueber Aetiologie der Tuberculose)։ Այդտեղ նա ապացոյց բերաւ, որ թոքերի բարակացաւը, կաշուի, ոսկորների, լեղերի և այլն տեղային տուբերկուլոզի զանազան տեսակները՝ բոլորն էլ հառաջանում են տուբերկէլ-բացիլի զարգացումից։

Արդէն այս գիւտը, որը սկզբում այլ և այլ կասկածների հանդիպեց, մեծամեծ հետևանքներ ունեցաւ բժշկական ըմբռնողութեան համար բարակացաւի էութեան մասին. իւր յետագայ զարգացումով այդ գիւտը տարաւ դէպի լայնի պրոֆիլակտիական միջոցները՝ տուբերկուլոզի տարածման դէմ։ Տուբերկէլ-բացիլի գիւտի ժամանակ Կոխը արդէն լայնեց, որ կարելի պիտի լինի միջոց գտնել, որը անվնաս կը դարձնի հիւանդութեան այս դրդողին։

Իբր գնահատութիւն իւր առաջին բակտերիոլոգիական աշխատութիւնների, դ-ր Կոխը 1880 թուականին կանչուեց Բերլին, որպէս կարգաւոր անդամ կայսերական-առողջապահական վարչութեան։ Նորա աշխատասիրութիւնը տուբերկէլ-բացիլի մասին դուրս եկաւ այդ հիմնարկութեան միջից։

1883-ին Կոխը նշանակուեց դաղտնի խորհրդական և իբր ղեկավար գերմանական խոլերական մասնախմբի, դ-ր Գաֆկի'ի ու դ-ր Ֆիշեր'ի հետ ուղարկուեց Եգիպտոս, ուստից նա յետոյ գնաց խոլերայի հարենիքը՝ Հնդկաստան։ Նաև այստեղ հանճարեղ և բաղդաւոր հետազօտողի աշխատանքը անհետևանք չանցաւ։ Հնդկաստանից նա վերադարձաւ յաղթութեան ձայնով՝ «էյրիկա» և ներկայացրեց իբր յաղթանակ այն, ինչ իւր ձեի պատճառով կոչուեց ստորակէտ-բացիլ։ Նաև այս դիւտը մեծ զարկ տուեց հետազօտներին՝ խոլերայի հիանդութեան զարգացման, տարածման և էութեան մասին։ Խոլերայի ճանաչելը դորանով շատ հեշտացուեց, և որքան շուտով նա ճանաչուում է՝ նոյնքան կարելիութիւն է տրուում նորա առաջն առնելու։

Պրուսական պետութիւնը, այնքան մեծ ջանքերով և անձնուիրութիւնով ձեռք բերած հետևանքների համար՝ պարգեւեց հետազօտողին 100.000 մարկ (կամ մօտ 33.000 ռուբլի ոսկով) և հիմնեց համալսարաններում ամբիոններ առողջաբանութեան համար (հիգիեն), որոնցից Բերլինի համար նա նշանակուեց կարգաւոր պրոֆեսոր, ստանալով դաղտնի բժշկական խորհրդականի տիտղոս։ Միաժամանակ հիմնուեց առողջաբանական ինստիտուտ, որը նորա ղեկավարութեանը յանձնուեց, ուր նա պատրաստեց այն առողջաբանների սերունդը, որոնք այժմ համապատասխան ամբիոններ ունին գերմանական համալսարաններում, որպէս Վոլֆհիւդէլ (Գյոտինդէն), Լյոֆլէր (Գրայֆսվալդ), Գաֆկի (Գիսէն), Գրեանէր (Ենա), Ֆրենկել (Կյոնիգսբերգ), Ֆիշեր (Կիլ)։

Կոխի արած ծառայութիւնների պսակն է այժմ նորա գտած միջոցը, որով մեռցնում են տուբերկէլ-բացիլներից վարակուած մարմնի հիւսուածքները, թէև դեռ ոչ բացիլները իրանք, և որով նոր սկսած թոքախտ-բարակացաւոտները տեղապէս բժշկուում են։ Գիւտի մանրամասնութիւնների մէջ այստեղ աւելորդ ենք համարում մտնել, քանի որ «Մուրճ»-ի սոյն իսկ համարում կը տպագրուին անշուշտ թէ Կոխի նորագոյն հրատարակութեան մանրամասն զեկուցումը և թէ նշանաւոր գիտնականներիվկայութիւնները այդ առիթով, որի մասին բոլոր քաղաքակրթուած երկիրներից լսում են դարմացման և ոգևորութեան ձայներ։ Չի կարելի սակայն լռութեան տալ նաև այս հանգամանքը, որ գերմանացի Կոխի այս նորագոյն գիւտի առիթով՝ լաւախս կրկնուում է Ֆրանսիացի մեծ գիտնական Պաստեորի անունը, որին մանաւանդ Ֆրանսիացիք համարում են իսկական աղբիւր Կոխի նորագոյն գիւտի։ Այդ խնդիրը երևի շուտով կը պարզուի, երբ Կոխի պատրաստած հեղուկի դաղանիքը ինքը հեղինակը կը հրատարակի։ Առ այժմ թող միայն տեղ տրուի շնորհակալութեան անխառն զդացմունքի բարեխիղճ և հանճարեղ հետազօտողին, որի գիւտը, որպէս երևում է, կոչուած է մարդկութեանը ամենատարածուած և ամենանանբուժելի համարուած ցաւի դէմ աջողութեամբ մարտնչելու։